

ՀՐԱՆՏ ԱՍՏՈՒՐԻ ԳՐԱԿԱՆ-ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՀԱՅԱՅՔՆԵՐԸ

Ն. Վ. ԱՆԱՆՅԱՆ

Հրանտ Ասատուրը որպես գրական գործիչ հանդես եկավ XIX դարի 80-ական թթ.: Դա մի ժամանակաշրջան էր, երբ եվրոպական մտայնությունը թափանցում էր արևմտահայ իրականությանը և ստիպում վերագնահատել գրական-գեղարվեստական շափանիշները: Ասատուրը բազմակողմանի հետաքրքրություններով օժտված գրագետ էր, որն իր կարողություններն ի նպաստ դրեց արևմտահայ գրականության ու մշակույթի առաջընթացին: Նրա գրական գործունեությունը առնչվում է դարավերջի արևմտահայ կյանքում տեղի ունեցող հասարակական և մշակութային տեղաշարժերի հետ: Հանդես գալով 80-ականների շարքերում, Ասատուրը մյուս գրողների հետ միասին (Գ. Զոհրապ, Ա. Արփիարյան, Տ. Կամսարական, Սիպիլ, Ա. Զուպանյան և ուրիշներ) առաջադրեց ուրույն սկզբունքներ: Գրականության զարգացման ասպարեզում նախորդ սերունդների ձեռքբերումները գնահատելով հանդերձ, «80-ականների շարժման» ներկայացուցիչները պաշտպանեցին ռեալիստական դպրոցի գեղագիտական դրույթները:

Հրանտ Ասատուրը հիմնականում տպագրվում էր Պոլսում հյատարակվող «Արևելք» և «Մասիս» պարբերականների էջերում: Նրա գրական-քննադատական գործունեության հիմքը (գրականագիտական, հրապարակախոսական հոդվածներ, գրախոսականներ, տեսական բնույթի ուսումնասիրություններ, գրողների դիմանկարներ, թատրոնի, արվեստի տարբեր ձևերի վերաբերյալ գործեր, դպրոցական դասագրքեր, հրապարակային ելույթներ) գրականության դերի բարձրացումն էր, նրա առաջընթացի ապահովումը: Գրականության զարգացումը պետք է տարվեր նորօրյա ըմբռնումների արմատավորման ճանապարհով և խթան լիներ ժողովրդի հոգևոր-բարոյական առաջադիմության գործին: Մի բան, որ շափազանց դժվար էր սուլթանական ռեժիմի պայմաններում, մեծ եռանդ ու կորույթ էր պահանջում ազգանվեր գործիչներից և հատկապես գրողներից:

1880-ական թթ. արևմտահայ հասարակական պայմանները թելադրում էին իրականության գեղարվեստական ընկալման նոր շափանիշներ: Ասատուրը, հաշվի առնելով գրականության զարգացման ներքին օրինաչափությունները, տեսնում էր գրական ուղղությունների հերթափոխման սկզբունքի անհրաժեշտությունը: Նա ևս, ինչպես «80-ականների շարժման» մյուս ներկայացուցիչները, հանգում էր այն եզրակացության, որ ռոմանտիզմը կատարել է իր պատմական դերը և սպառել իրեն. «Հին, ուռուցիկ գրականությունը աթուղուններ ալս նոր կաճառին մեջ,— գրում է քննադատը,— «Հոգի»ի, «Վարդ»ի, «Սոխակ»ի բոսորացած նանրաբանությունները, դպրոցականի հավակնոտ ճառերը, պատվելիական քնաբեր գրվածները, բացազանչությանց այն հավաքածոները բոլոր, որոնք վերացական սերունդի մը հոգեկան գլխավոր սնունդը կը կազմեին ալն ատեն... կը վտարվեին...»¹: Տեսանելի էին այլևս ռոմանտիզմի զաղափարական և դեղագիտական թերություններն ու սահմանափակությունը: Զգացվում էր իրականության ավելի խոր պատկերման անհրաժեշտու-

¹ «Արևելք». 1898, № 3771:

թյունը և գրականության առաջատար դերը ստանձնում էր ռեալիզմի ուղղությանը: Արևմտահայ գրական միտքը դուրս էր գալիս ավելի լայն ուղի՝ դեպի կյանքի ըմբռնման ու վերլուծման, ժողովրդի հոգսերի ու ապրումների պատկերման ուղին. «Օրը օրին ապրած կյանքը,— գրում է Ասատուրը,— ժողովուրդին բարեբերուն ուսումնասիրությունը, աղգալին միջավայրի մանրավեպներ, քրոնիկներ և նորավեպներ առողջ ու նուրբ գրականության մը նախախաչիքը կը բերեն հոն»²:

Ասատուրը մասնակից էր գրական այս նոր շարժմանը և գնահատում էր նրա կազմակերպիչների ջանքերը, որոնք համախմբված էին հիմնականում «Արևելք» և «Մասիս» պարբերականների շուրջ: Նա տեսնում էր նոր սերնդի մտահոգությունը՝ գրականությունը կյանքին կապելու ձգտումը, որը հասարակական կարևոր նշանակություն էր ստանում: «Մեր նորագույններն են առնոք,— գրում է Ասատուրը գրական նոր շարժման ներկայացուցիչների մասին,— մեր գրականության ապագային «գեղածիծաղ հույսերը»: Եվ ապա. «Անոնք աշխույժ, հրաշք, հավատք են համակ...»: Ժամանակակիցների ստեղծած գրականությունն ավելի առողջ է ու կենսունակ՝ տոգորված հասարակական խնդիրների վերլուծական ընկալմամբ: Ասատուրը գնահատում է ռեալիստական գրականության ներկայացուցիչների կյանքի ճանաչողությունը, գրականությունը ժողովրդին ի սպաս դնելու ձգտումը և հակադրում այն վերացական ու վերամբարձ ոճին, որ ստեղծում էր անցյալի ու մանտիկական գեղագիտություն. «Գրականության համար իրենց հատուկ տեսությունները ունին,— նոր սերնդի մասին գրում է Ասատուրը,— քիչ մը արմատական բայց խոհուն տեսություններ, որոնք մտածեցնել կուտան իրենց անդրանիկները: Եվ իրենց գրականությունը ալ շնորհադարձներ բնավ 60ի և 70ի սերունդին փրոցուռուց ճամարակությունները, այլ հիմ մը ունի, բան մը կ'ուղե սորվեցնել, օգտակար ըլլալ»³:

Գրականությունը պետք է հորամուխ լիներ իրականության պահանջներին, պատասխաներ ազգային ու սոցիալական հրատապ խնդիրներին, «բան մը սորվեցնեն», «օգտակար ըլլար»: Ասատուրի կարծիքով արվեստը, առաջին հերթին գրականությունը, նպատակասլաց պետք է լինի, ցույց տա կյանքի իրական պատկերը, վեր հանի նրա բուն բովանդակությունը և պատասխան տա առաջադրված խնդիրներին: Գաղափարական ալս նոր դրույթներն ու շահանքները «առողջ գրականություն» ստեղծելու պահանջը հենց ռեալիստական արվեստի «ոգին» էր, որ «սկսավ մշակվիլ» և «որուն ազդակներն եղան Արփարյանեն զատ Գ. Զոհրապ, Լ. Քաջալյան, Տ. Կամսարական, Գ. Ֆնտզըլյան, Ե. Օտյան, Ա. Չոպանյան և ուրիշներ»⁴:

Պաշտպանելով 80-ականների գրական շարժումը, Ասատուրը ողջունում է ռեալիստական ուղղությամբ գրված արևմտահայերի առաջին երկերը և մի ընդարձակ գրախոսականով հանդես գալիս Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպի տպագրման առիթով: Գրախոսականում Ասատուրը մանրամասն շարադրում է իր տեսական դրույթները ռեալիստական մեթոդի վերաբերյալ: Մեծ տեղ տալով իրականության ուսումնասիրմանը, նա գտնում է, որ գրողը պետք է քննի, վերլուծի մարդուն, որպես այդ իրականության արդյունք. «...վիպասանության ուսումնասիրությունը,— գրում է քննադատը,— ցորձափ չեն հեռանար իրական կյանքեն, այդ օրինաց գաղտնիքներուն պիտի թափանցեն հետզհետե և վեպն այսու ընկերաբանության զարգացման պիտի նըպաստի հզորապես»: Գրողը երբեք պասսիվ հայեցողի դերում չպետք է լինի: Վեր հանելով իրականության ճշմարիտ պատկերներ, նա պետք է բացատրություն տա կյանքի երևույթներին և գտնի այն ուղիները, որոնք կտանեն դեպի «ազնիվն ու գեղեցիկը»: «Վեպը պիտի վարե նաև բարոյացուցիչ դեր,— գրում է Ասատուրը,— զի կրից պատճառներն ուսումնասիրելով, անոնց չափավոր-

² Նույն տեղում:

³ Նույն տեղում, 1899, № 4087:

⁴ Նույն տեղում:

ման միջոցներն ալ ի գործ դնելու պիտի օժանդակեն: Նկարագրելով միջավայրը, վեր հանելով նրա բոլոր ծալքերը, քննադատը նկատում է, որ «բնապաշտ վիպասանք կը ներկայեն ինչ որ ճշմարիտ է, ինչ որ կա կյանքին մեջ, որքան ալ տգեղ, որքան ալ ժահրոտ լինի այն»⁵:

Ռեալիստական ուղղության վերաբերյալ իր տեսական ելակետերն առաջադրելուց հետո, Ասատուրն անցնում է Կամսարականի վեպի վերլուծությանը: Նա շարագրում է վեպի բովանդակությունը և ցույց տալիս հեղինակային այս միջոցները, որով վեր են հանվում մարդկային հարաբերություններն ու հասարակական օրինաչափությունները. «Այսպես բացահայտ կը տեսնվի,— գրում է քննադատը,— թե Կամսարական ջանացած է ճշմարտությունն յուր երկի մեջ ընել գերիշխան, և ներկայել ընթերցողաց իրական կյանքի պատկերներ»⁶: Իրականության ճշմարտացի արտացոլումը Ասատուրի մոտ դառնում է երկի գնահատման կարևոր չափանիշ: Կյանքի իրական պատկերը տալիս իրական պետք է լինեն նաև տվյալ միջավայրում գործող անհատներն իրենց մարդկային հարաբերություններում և հոգեբանությամբ: Վեպի հերոսների էությունը քննելիս քննադատը առաջադրում է ճշմարտացիության չափանիշը և այդ սկզբունքով վերլուծում նրանց կերտվածքն ու արարքները: Այս առումով, որոշ մանրուքներում, նա ճեղքվածք է նկատում և կանգ առնում հասկնապես Արամի կերպարի վրա: Ասատուրը, իրական շահմարելով Արամին բնորոշող հատկանիշները, ելնում է ռեալիզմի տիպաբանության սկզբունքներից: Անհատը չի կարող կտրված լինել այն սոցիալական միջավայրից, որի արդյունքն է ինքը: Եթե Կամսարականը տալիս է հասարակության տարբեր խավերի ու միջավայրի ճշմարիտ արտացոլումը, ապա կերպարի ու շրջապատող իրականության փոխադարձ պայմանավորվածության սկզբունքով պետք է կերտեր Արամի անհատականությունը, որի սոցիալական վարքագիծը պետք է պատճառաբանված ու համոզիչ հիմքեր ունենար:

Ասատուրը նշում է. «Իրապաշտ վեպերու մեջ, ինչպես որ անձերն պետք չէ լինին մտացածին, նույնպես ալ դեպքերն պետք չէ լինին տեսլական»: «Կամսարական լավ ըմբռնած է զայս,— շարունակում է նա,— և ջանացած է որ յուր ի հայտ ածած դեպքերն ընթերցողին բնական երևան և բարբերն ալ համաձայն միջավայրին, ուր տեղի կունենան այդ դեպքերն»: Ասատուրը գրահասում է Կամսարականի կարողությունն ու հմտությունը պոստհայ միջավայրի նկարագրման ասպարեզում: Հեղինակը կերտում է սոցիալական իրականության ու հանգամանքների ճշմարտացի պատկերներ, հասարակության տարբեր շերտերի կյանքի և սովորությունների կենդանի նկարագրություն:

Ռեալիստական ուղղության դրույթները զարգացնելիս Ասատուր-քննադատի համար կարևորը գեղարվեստական ստեղծագործության մեջ իրականության և դեպքերի, «կյանքի գլխավոր գիծերուն վերհանումն» է, որի իրագործումը նա տեսնում է Կամսարականի վեպում և համարում դա հեղինակի գլխավոր նվաճումը: Քննադատն ուշադրություն է դարձնում նաև հեղինակի գեղագիտական հնարանքներին և արժեքավորում Կամսարական-արվեստագետի կարողությունները՝ վիպական սյուժեի կառուցման, կերպավորման, լեզվա-ստեղծական առանձնահատկությունների դրսևորման բնագավառում. «Կամսարականն ունի կենդանի և փայլուն ոճ մը,— գրում է նա:— Առանց ճիգի գտած է շատ մը նոր բացատրություններ. հասարակ տեղիք քիչ անգամ կը հանդիպին աչքերուդ, զի նա կը խորշի ծանոթ բաղդատություններն և տաղտաղտ կրկնաբանություններն: Յուր պարբերություններն չունին հավանություն կատարելության, այլ գրեթե միշտ կը գտնե բառն որ միայն պիտի կրնար բացատրել լիովին յուր գաղափարը կամ զգացումը: Յուր ոճին գլխավոր հատկությունն է պարզություն. ոչինչ բռնազբոսիկ, ոչինչ արվեստակալ, ոչինչ հանդիսավոր»:

⁵ Նույն տեղում, 1888, № 1500:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում:

Գրախոսելով Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպը, Ասատուրը առաջադրում էր գրական այն սկզբունքներն ու համոզումները, որ նրանում էին արևմտահայ գրականության մեջ ռեալիստական ուղղության դարգացման ուղիները: Այն ուղղության, որ ամենից ավելի համահնչուն էր ժամանակաշրջանի գաղափարական-գեղագիտական առաջադրույթներին և հեռանկարային՝ գրականության հետագա զարգացման ասպարեզում:

Դարավերջի արևմտահայ գրականության զարգացման մեջ ինքնորոշվում էին արձակի ժանրերը, նրա տարբեր տեսակները՝ քրոնիկն ու նորավեպը, պատմվածքն ու վեպը: Ասատուրը գնահատում է քրոնիկի ու նորավեպի ժանրերում արևմտահայ գրողների ձեռք բերած նվաճումները: Մամուրյանի, Արփիարյանի, Զոհրապի և մյուսների քրոնիկներն ու նորավեպերը վերցված էին «օրվան կյանք», արտացոլում էին իրական պատկերներ: Փոքր կտավի ստեղծագործության բնագավառում առանձնակի դեր ունի Գրիգոր Զոհրապը, որը Ասատուրի բնորոշմամբ «նորավեպերուն... մեջ ի հայտ եկավ ինքնատիպ պատկերներով» և «արդիական ոգին մտցուց արևմտահայ գրականության մեջ. անակնկալ բաղդատություններով, հոգեբանական վերլուծումներով, կյանքի իրական պատկերների լուսագրությամբ»: Զոհրապի նորավեպերը առավել արժեքավոր են նրանով, որ «կյանքն էր իր գլխավոր ներշնչարանը, և իր միջավայրն էր որ եղած է այն բեղմնավոր հողը, որմե քաղած է այնքան կենսալիր, թրթռուն, բաբախուն երկեր, որոնք միշտ հաճույքով պիտի կարդացվին»⁸:

Արձակի տարբեր ժանրերի դրսևորումները գնահատելով հանդերձ, Ասատուրը սուսկնալիս տալիս է վիպագրությանը և տեսնում նրա զարգացման հեռանկարը: Մեծ են վեպի ընդգրկման սահմաններն ու հնարավորությունները՝ հասարակական և անհատական կյանքի բազմակողմանի ուսումնասիրման առումով: Վիպագրությունը անկաշկանդ առավելություն է շնորհում գրողին՝ դրսևորելու իր գաղափարական-գեղարվեստական հնարավորությունները և Ասատուրի բնորոշմամբ՝ «հարմարագույն ձևն է ընկերական ուսումնասիրությանը համար»: «Գրագետն վեպին մեջ ազատ ասպարեզ կը գտնե քննելու հոգեբանական վիճակներն,— գրում է քննադատը,— պատկերելու կյանքն ընկերական և կյանքն ընտանեկան, խոսելու սիրո վրա, ամուսնության վրա, առն ու կնոջ, ծնողաց ու զավակաց հարաբերությանը վրա: Վիպասանն... կը քննադատե, կը վերլուծե, կը պարզե իրողություններ, խորհուրդներ և հոգեկան հուզումներ: Այս պատճառով ահա վիպական ձևն կը դառնա նախամեծար ձևն քաղաքակիրթ աշխարհին գրագիտաց»⁹:

Ասատուրը տեսնում է վիպագրության գրաված առաջատար տեղը եվրոպական գրականության մեջ և նրա լայն հնարավորությունները՝ ժամանակաշրջանի հասարակական հարաբերությունների, գիտական նվաճումների, մարդկային կապերի բացահայտման առումով. «Վեպը կընդգրկե մարդկային ժանոթությանը բոլոր ճյուղերն,— գրում է նա,— անդ մատենագիրն ամեն բան կընա քնել, քերթություն, իմաստասիրություն, գիտություն»¹⁰:

Գրականագետը, եվրոպական և արևելահայ վիպագրության համեմատական զուգահեռներով աշխատում է տալ ժանրի զարգացման պատմությունը արևմտահայ գրականության մեջ: Հովհ. Հիսարյանի «Խոսքով և Մաքրուհի» և Արմենակ Հայկունու «Էլիզա» վեպերը արևմտահայ վիպագրության առաջին օրինակներն էին, որոնք գրված էին հիմնականում թարգմանական գրականության ազդեցությամբ և ազգային հենք չունեին: Մինչդեռ արևելահայ իրականության մեջ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանից» սկսած վեպը լայն ասպարեզ էր մտել, մշակվում էին վիպագրության ժողովրդայնացման սկզբունքները, արժարժվում էին կենսական նշանակություն ունեցող սոցիալական, ազգային խնդիրներ: «1885-են ետքն է, որ Պոլսո մեջ բարքերու ուսումնասիրու-

8 Հ. Ասատուր. Դիմաստվերներ. 1921, Կ. Պոլիս, էջ 243—244:

9 «Արևելք». 1888, № 1500:

10 Նույն տեղում:

թյուն պարունակող քանի մը վեպեր հրատարակվեցան,— գրում է Ասատուրը,— ուր ֆրանսական արդի վիպագրության արվեստին հետ ի հայտ կու գար նաև որոշ ձգտում մը տեղային գույնով պատկերացնելու վեպին անձերը, միջավայրը նկարելով բնականին վրա»¹¹։ Որպես օրինակ քննադատը բերում է օր. Ալիսի «Աղջկան մը սիրտը», Կամսարականի «Վարժապետին աղջիկը», Զոհրապի «Անհետացած սերունդը» և «Նարդիկ» անավարտ գործերը, որոնք «նոր վիպական դպրոցի մը հիմերը գրին»։ Պաշտպանելով ռեալիստական ուղղության սկզբունքներն ու նրա ընձեռած լայն հնարավորությունները գրականության ժողովրդայնացման բնագավառում, Ասատուրը բուն ազգային վիպագրության զարգացման պահանջ է դնում. «Այդ ուղղությամբ գրված վեպեր ապաքեն մեծագույն օգուտ կը հայթայթեն ժողովրդյան, քան եվրոպական վեպերը»,— գրում է նա։ «Ինչ օգուտ երբ վեպն, զոր հայն կ'ընթեռնու, մատնանիչ ընեն եվրոպական մոլությունքն ու մոլորությունքն,— շարունակում է գրականագետը,— հարկ է որ հայ ժողովրդյան ներկայացվին ու նշավակվին յուր իսկ նախապաշարումներն, յուր խոսք բարոյական ախտերն, յուր իսկ ընկերական անիրավություններն։ Եվ հետո, վեպերն կօգնեն պատմության, ապագային կտակելով ներկայի ընկերական վիճակն, ընտանեկան վիճակն, ժողովրդյան ձգտումներն ու բարքերն»¹²։

80-ականների գրական շարժումը և վիպագրության զարգացման նոր միտումները ողջունելով հանդերձ, Ասատուրը այնուամենայնիվ դժգոհ է առաջընթացից։ Արևելահայ արձակի զարգացման ընթացքի համեմատությամբ, երբ ասպարեզի վրա են, ստեղծագործում են Շիրվանզադեն, Լեոն, Մուրացյանը, Վ. Փափաջյանը և ուրիշներ, նա արևմտահայ գրողների ձեռնարկը «մեկուսացյալ փորձեր» է համարում և նկատում, որ «այսօր ռուսահայ վիպագրությունը անբաղդատելի գերազանցություն մը ունի մեր վրա եթե ոչ ոճի նրբության տեսակետով, գեթ վիպագրական արվեստին, բարքերու ուսումնասիրության և հոգեբանական երևույթներու զննության տեսակետով»¹³։ Ասատուրը ցավով է արձանագրում վիպագրության թերի զարգացումը արևմտահայ գրականության մեջ և կոչ է անում գրողներին կատարելագործել արձակի այդ ժանրը, մանավանդ որ «ընթերցողներն ալ տենդորեն ծարավ մը կը զգան տեղային կյանքի վեպեր կարդալու»¹⁴։

Հրանտ Ասատուրը անդրադարձել է երգիծանքի դերի կարևորությանը արևմտահայ գրականության մեջ։ Երգիծանքն անմիջական ազդեցություն ունի ժողովրդի վրա, նա նպաստում է ընթերցասիրության տարածմանը։ Մարդը «համ շառներ բարոյական ճառերեն, բանասիրական գիտելիքներեն, ուսումնական տեղեկություններեն, մինչ ախորժով կը կարգա զվարճալի գրվածները և զբոսալի լուրերը»¹⁵։ Ասատուրը կարևոր տեղ է տալիս երգիծանքի ազդեցությանը հասարակական հարաբերությունների, մարդկային-բարոյական խնդիրների իրագործման վրա. «Երգիծանքն ու ծաղրանքը ժողովուրդին բարքերը պիտի ուղղեն»,— գրում է նա,— հեգնությամբ ձաղկելով մասնավորներու վրա տեսնված պակասությունները, նախապաշարումները և անվայել սովորությունները»¹⁶։ Նա բարձր է գնահատում Հարություն Սըվաճյանի դերը արևմտահայ գրականության մեջ երգիծական ժանրի սկզբնավորման ասպարեզում և խիզախ ձեռնարկ համարում «առաջին հայ զավեշտաթերթին»՝ «Մեղուի» հրատարակումը։ «Մեղուն» Հ. Սըվաճյանի խմբագրության օրով» ընդարձակ հոգվածում գրականագետը առավել ուշադրություն է դարձնում Սըվաճյանի մարտնչող սկզբունքայնության, նրա երգիծանքի անդիջող ու աննկուն ոգու

11 Նույն տեղում, 1899, № 4009։

12 «Մասիս». 1887, № 3872, էջ 144։

13 «Արևիկ». 1899, № 4009։

14 Նույն տեղում։

15 «Հանրագիտակ». 1905, Կ. Պոլիս, № 1։

16 Նույն տեղում։

վրա. «...իր քննադատությունները,— գրում է նա հրապարակագրի մասին,— երևան կը բերեին պայքարի մարդը, որ իր կարծիքներու փարած է, ինչպես կրոնամուլը իր հավատքին, որ չի քաշվիր հարվածելու նույն իսկ իր ուսուցիչը կամ բարեկամը»¹⁷:

Այս առումով Ասատուրը բարձր է գնահատում նաև «մեծ երգիծաբանի»՝ Հակոբ Պարոնյանի երգիծանքի ուժն ու արվեստը: «Երբ մոլություն մը դեմ կը խոսի,— գրում է նա Պարոնյանի մասին,— երբ թերություն մը մատնանիշ կընեն, խստափույթ բան մը ունի, անգութ, աններող: Կը հարվածեն միշտ ինչ որ իրեն վնասակար կ'երևա, շարը, տգեղ, տգեղը, ծաղրելին: Իր հեզնություններ ուժգին է: Իրապաշտ մըն է, կատարյալ իմաստովը»¹⁸:

Գրականագետը Պարոնյանին համարում է արևմտահայ ռեալիստական ուղղության սկզբնավորողներից մեկը և անդրադառնում իրականության ճշմարտացի արտացոլման նրա կարողությանը: «Իր նշանաբանը պիտի ըլլա,— գրում է նա Պարոնյանի մասին,— մոլությունները ձաղկել, կեղծիքը դատափետել, առանց ձեռնոցի, առանց արդուզարդի, բոլորովին մերկ, ինչպես կը վայելե ճշմարտության»¹⁹:

Հասարակական կայերի, մարդկային հարաբերությունների, կենցաղի ու միջավայրի ռեալիստական պատկերումը երգիծանքի առավել գնահատելի կողմերից է. «...Պարոնյան ուսումնասիրած է իր շուրջը,— գրում է Ասատուրը,— տեսած մարդիկն ու բարքերը՝ խորունկ հոգեբանությամբ ըմբռնած է անոնց ծաղրելի, այլանդակ կողմերը, և գրչի մեկ շարժումով հաճախ ներկայացուցած է կյանքի ամբողջ տեսարան մը՝ տպավորական նկարիչներուն նրման, որոնք քանի մը գիծերով արտահայտիչ պատկեր մը կ'անձնավորեն»²⁰:

Ասատուրը, առանձնացնելով Պարոնյան-գրողին, անդրադառնում է նրա խմբագրական գործունեությանը և գտնում, որ Պարոնյանը որպես «Մեղուի» խմբագիր «նշանակալից հետք մը պիտի ձգեր հայ լրագրության պատմության մեջ»: Բարձր է գնահատում նա Պարոնյանի «Թատրոնը»: Այն երգիծական նյութերը, որ սփռված են «Թատրոնի» էջերում, վեր են հանում հասարակական անկատարությունները, «տոհմային մոլություններն ու ընտանեկան զեղծումները» այնպիսի գվարճությամբ, որի հիմքը «տրամաբանությունն ու ողջամտությունն» է և անսահման անկեղծությունը: Ասատուրը Պարոնյանի երգիծանքում լուրջ մտահոգություն է տեսնում, առաջին հերթին, ազգային շահերի հանդեպ. «միշտ հարգանք ունի հանրության համար»,— գրում է նա: Պարոնյանի ծաղրը իրականության հանդեպ մակերեսային ու անցողիկ չէ: Ասատուրը բացում է նրա երգիծանքի սթափ ոգին և ողջախոհությունը. «Երբ բանի մը վրա կը խնդա, երբեմն զայրույթ ունի, երբեմն դառնություն, քիչ անգամ ատելություն, երբեք չարություն, իսկ անկեղծություն՝ միշտ: Անկեղծությունը հաճախ ծայրահեղության տարած է. իր շահուն վնասելու աստիճան»²¹:

Քննադատը տեսնում է Պարոնյանի անսահման նվիրումը գրականությանն ու ժողովրդին, նրա ստեղծագործությունների գաղափարական հագեցվածությունը և երևույթների բովանդակության բացահայտման կարողությունը, նրա չգունազարդված ռեալիզմը. «Իր գրականությունը պերճանքե չախորժիր,— գրում է Ասատուրը,— Իր հետաքրքրություններուն մեջ, իր հակադրություններուն մեջ, իր սրախոսություններուն մեջ մանավանդ կը ջանա գնել իր տաղանդին բոլոր ճարտարությունը. հոգին կը փնտրե ավելին քան մարմինը, ձևեր ավելի նյութն է որ զինք կըզբաղեցնեն»²²:

17 Նույն տեղում:

18 Հ. Ասատուր. Դիմաստվերներ, էջ 179:

19 Տարեցույց Նշան-Պապիկյան. 1906, Կ. Պոլիս, էջ 112:

20 Հ. Ասատուր. Դիմաստվերներ, էջ 171:

21 Տարեցույց Նշան-Պապիկյան, էջ 134:

22 «Մասիս». 1892, № 3972, էջ 279:

Ըստ Ասատուրի, երգիծանքը տեղ կհասնի և օգուտ կբերի, եթե գրված լինի ժողովրդին հասկանալի լեզվով. «...պետք է գործածե՞ն այնպիսի լեզու մը,— գրում է քննադատը,— զոր ումիկը հասկնա, որ իր ամեն օրվան խոսած լեզուն ըլլա»²³։ Այս առումով գրականագետը գնահատում է թե՛ Սրվաճյանին և թե՛ Պարոնյանին, որոնց համարում է աշխարհաբարի հիմնադիրներից ու մըշակողներից։ Անդրադառնալով Պարոնյանի լեզվին և ոճամտածողության առանձնահատկություններին, Ասատուրը գրում է. «Պարզ լեզու մը, ժողովրդական բառեր, ամեն օր խոսված բարբառով միայն... Եվ սակայն որչափ նոր է իր այդ անխառն պարզության մեջ. ի՞նչ շենշող բնություն մը, խնդալու ու խնդացնելու պատրաստ միշտ...»²⁴։

Հրանտ Ասատուրն իր գրական դործունեության ընթացքում հաճախ անդրադարձել է թատրոնի հասարակական արժեքին և բարոյական ազդեցությանը։ Նա հանդես է գալիս մի շարք հոգվածներով ու գրախոսություններով, գրում է «Արևելյան թատրոնի պատմություն»։ աշխատությունը, որտեղ անդրադառնում է ազգային թատրոնի սկզբնավորմանն ու զարգացման հեռանկարներին։ Գրականագետը առաջնահերթ է համարում թատրոնի դերը աղբյուրի լուսավորության, առաջընթացի գործում. «Անդ, ուր քաղաքակրթությունն ծագած է,— գրում է նա,— անդ նաև թատրոն եկած է ազգաց առաջադիմության շարժիչ մեքենաներեն մին լինիլ»²⁵։ Հայ ժողովուրդն էլ «քաղաքակրթ ազգաց բանակին գինվորագրվալ», ունեցավ իր ազգային թատրոնը։ Քառորդ դար առաջ ձևավորվեց արևմտահայ դրամատուրգիան, որի հիմքերը դրին Պեշկևաշվյանի, Հեքիմյանի, Դուրյանի և մյուսների ողբերգությունները։ Ժողովուրդը ոգեվորվեց և «եռանդով համակված, հախուռն դիմեց թատրոնի սրբազան հարկի տակ»։ Աղգային ողբերգությունները մեծ դեր կատարեցին արևմտահայությանը հայրենասիրական ոգով կրթելու գործում. «Ազգային ողբերգություններու մեջ,— գրում է Ասատուրը,— հայ երիտասարդությունն կենդանի գույներու տակ տեսավ մեր անցյալ երջանկությունն և փառքն, և բաղդատելով զայնս մեր արդի թշվառության հետ, հուզվեցավ, զայրացավ և հայրենասեր դարձավ»²⁶։

Արևմտահայ թատերգության զարգացման գործում Ասատուրը նշում է եվրոպական հեղինակներից կատարած թարգմանությունները, որոնք «անօդուտ չեղան... և մեք իրական բարիքներ քաղեցինք այդ լուսասփյուռ կեդրոնեն»²⁷։ Քննելով արևմտահայերի թարգմանած դրամատիկական երկերը՝ Վոլտերից մինչև Հյուգոյի և Դյումայի պիեսները, գրականագետը հնացած է տեսնում նրանց բովանդակության և արվեստի դրսևորման միջոցները։ Նա օննադատում է կլասիցիստական և ռոմանտիկական ուղղությունների առաջ քաշած հարցադրումները, համարում դրանք իրենց դարն ապրած, որքան էլ ժամանակին սնունդ են տվել աղգային-հայրենասիրական ձգտումներին։ Փոխվել է ժամանակաշրջանը, փոխվել են իրականության գեղարվեստական արտացոլման պահանջներն ու խնդիրները։ Գեղարվեստն այժմ պահանջում է կյանքի ճշմարտացի պատկերում, ժամանակակից թեմատիկայի և գեղագիտական նոր հնարանների յուրացում։ Ասատուրը արևմտահայ դրամատուրգիայի դարգացման ասպարեզում ևս առաջադրում է ռեալիզմի գեղարվեստական սկզբունքների կիրառում։

Արևմտահայ թատրոնը զարգացման նոր շրջան է ապրում և պետք է ընթանա հասարակական նոր պահանջների բավարարման ուղիով։ Այս առումով հետաքրքիր է Ասատուրի գրախոսականը Գ. Սունդուկյանի «Ամուսիններ» պիեսի բեմադրության առիթով։ Նա նշում է դրամատուրգի ստեղծած երկերի ժողովրդային էությունը. «Սունդուկյանց մեր թատերագիրներուն մեջ,— գրում

23 «Հանրապետակ». 1905, № 1։

24 «Մասիս». 1892, № 3972, էջ 279։

25 Նույն տեղում, 1880, № 2762։

26 Նույն տեղում։

27 Նույն տեղում։

է նա,— կրնա առաջինը նկատվել իբր ուսումնասիրող ժողովրդական կյանքին. բարձր իմաստներ, ճոխ բարբառ չէ որ կը դնե իր հերոսներուն բերնին մեջ, այլ Թիֆլիսի ժողովրդին խոսած ուսման լեզուն. սակայն իր խաղերուն մեջ կը տեսնենք իրական դեմքեր, ոսկր, միս ու ջիղ ունեցող մարդիկ, որոնք իրենց ամեն օրվան կյանքը կ'ապրին»²⁸։ Ասատուրը գնահատում է դրամատուրգի կյանքի արտացոլման, մարդկային հարաբերությունների դրսևորման և կերպավորման ռեալիստական մեթոդը. «Խաթաբալան, էլի մեկ զոհը, Պեպոն և Քանդած օջախը,— գրում է նա,— կը ներկայացնեն մեղ Թիֆլիսի հայոց զանազան տիպարները, վաճառական, արհեստավոր, կինտո, ամենեն մոլթ խավերը ժողովուրդին, ուր կը մտնե Սունդուկյանց ի վեր հանելով անոնց անձնուրին ինքնությունը»²⁹։

Ասատուր-գրականագետի մտահոգության առարկան է եղել անցյալի մը շակույթի պատմական ուսումնասիրությունն ու արժեքների գնահատումը։ Նա պահանջ է դնում ստեղծել պատմաքննական աշխատություններ՝ նվիրված արվեստի տարբեր ճյուղերին և նրանց նշանավոր ներկայացուցիչներին։ Առայժմ չկան պատմական սթափ հայեցողությամբ գրված լուրջ ուսումնասիրություններ, «քանի մը փորձեր» են միայն, որոնք գիտական քննության չեն դիմանում. «մեր դարու հայ լրագրության,— գրում է նա,— հայ թատրոնին, հայ արվեստին, հայ վաճառականության, հայ տպարաններուն, հայ դպրոցներուն պատմությունը պետք է գրվի վերջապես»³⁰։ Այս պահանջը Ասատուր-գործի համար պայմանավորված էր հայության հոգևոր գոյությունը հաստատելու ձգտումով և ազգային առաջընթացի մտահոգությամբ։ Նա ինքը տարբեր ժամանակներում ստեղծել է դարակեսի գրողների, մշակույթի նշանավոր գործիչների դիմանկարներ՝ մեծ տեղ տալով ժամանակի գրական միջավայրի ուսումնասիրությանը։ Մամուլում սփռված դիմանկար-պատկերները Ասատուրը հետաքալում համախմբել է «Դիմաստվերներ» հատորում։ Գրքում ամփոփված են XIX դարի այն սերնդի ներկայացուցիչների դիմանկարները, որոնք մի որոշակի ճանապարհ են անցել, առնչվել նոր գրականության ստեղծման փաստին։

Հրանտ Ասատուրի դիմանկարների շարքը հուշագրային կենսագրություն է, որտեղ գրողի կյանքը կապվում է նաև հասարակական հանգամանքների հետ. «Ընտրած եմ այն գրողները,— գրում է նա,— որոնցմով մասնավորապես հետաքրքրված եմ կամ զորս մոսկին ճանչնալու առիթ ունեցած եմ և ջանացած եմ ներկայացնել ընթերցողին ճշգրիտ ու ամփոփ ծանոթություններ անոնց կյանքին ու երկերուն վրա, մանրադեպեր, անձնական հիշատակներ կամ տպավորություններ, որոնք կրնան ծառայել պատկերացնելու այն դերը, զոտ ունեցած են մեր գրականության մեջ»³¹։

Ասատուրը չի տարվում գրողների ստեղծագործությունների քննական հետադոտությամբ։ Սակայն հենց այն հանգամանքը, որ դիմանկարներում կյանքի գեղարվեստական շարադրանքին կցված է նաև գրական միջավայրի ու ստեղծագործող անհատի ուրույն հատկանիշների մեկնաբանումը, ինչպես նաև ժամանակաշրջանի տիրապետող ոգին, հնարավորություն է տալիս «Դիմաստվերներ» դիտել ավելի շուտ գրականության պատմության շրջանակներում, շնայած նրան, որ այնտեղ չկա գրականության պարբերացում, զարգացման օրինաչափությունների բացահայտում կամ գեղարվեստական երկերի վերլուծություն։

Պատմական սթափ հայացքով Ասատուրը, գրողների անձնական վարքի մանրամասների կողքին, գնահատում է նրանց բերած ծառայությունը ժամանակաշրջանի ազգային մշակույթին։ Ասատուրը բացահայտում է գործիչների դերը՝ տեղի ու ժամանակի տարածքում։ Նա չի խուսափում նաև քննադատական

28 Նույն տեղում, 1898, № 18։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում, 1892, № 3971։

31 Հ. Ասատուր. Դիմաստվերներ, Ներածություն։

մոտեցումից: Ն. Ռուսինյանի «Ուղղախոսություն» լեզվաբանական աշխատությունը դիմանկարիչը համարում է մի գործ, որտեղ հեղինակը «նկատողությունն չէ առած միջավայրը, ժամանակը, արմատացած բարքերն ու սովորությունները»: Ասատուրը նկատում է, որ աշխարհաբարր ունի զարգացման իր ընդհանուր օրինաչափությունները և անհնար է պատմաստել նրան ինքնահրեճնար լեզվական կանոններ: Այդ իսկ պատճառով նա Ռուսինյանի ուսումնասիրությունը դիտում է որպես մի ձախողված գործ, «իբր մտքին կաղապարեն թափված տրամաբանական լեզվի մը քմահաճ օրենքների» գիրք և գրում է. «Ասոր համար է որ իր ուղղախոսությունը մեռելածին քերականություն մը և՛ դավ, և՛ հազիվ թե քանի մը հետքեր թողուց մեր արդի լեզվին մեջ»³²: Ասատուրը բազմիցս անդրադարձել է աշխարհաբարրի ձևավորման հարցին և նրա զարգացումը քննել պատմական ասպեկտով: Գրականագետը կտրականապես դեմ էր լեզվին «անսովոր ձևեր ընդունել տալու փորձին» և պահանջում էր լեզվական օրինաչափությունների խորին զննում, նրա զարգացման միտումների գիտական, լուրջ ուսումնասիրում:

«Դիմաստվերները» հնարավորություն է տալիս ծանոթանալու նաև Ասատուրի գրական ճաշակին ու գեղագիտական նախասիրություններին: «Գրիգոր Զոհրապ» դիմանկարում շեշտը դրված է գրողի կյանքում և ստեղծագործությունների մեջ դրսևորված գեղեցիկի պաշտամունքին. «Գրականության մեջ ինչպես ներքին կյանքի մեջ,— գրում է Ասատուրը,— Զոհրապ իւանդավառ գեղապաշտ մըն էր: Երբ տեսներ սիրուն գեղոր մը, գեղարվեստական շենք մը, արվեստագետ նկար մը, չէր կրնար անտարբեր աչքերով անցնել անոնց առջևն...»³³:

Գրականագետի համոզմամբ, գեղարվեստական մնայուն գործերը ծրվում են իրականության ճշմարտացի պատկերումից և գրողի տաղանդից: Զոհրապը ուրիշ գրողների հետևող չեղավ, հենվեց միայն իր ստեղծագործական վարպետության, իրական դեպքերի և անհատի հոգեբանության մեջ խորամուխ լինելու սեփական կարողության վրա: Կյանքի խոր մբռնման, գեղագիտական ճաշակի և բանաստեղծական վերարտադրման կարողության համադրությունն էր, որ Զոհրապին դարձրեց նորարար արևմտահայ գրականության մեջ:

Ասատուրը գրողների երկերը վերլուծում է օբյեկտիվ-պատմական չափանիշներով, գնահատում նրանց ըստ իրական նշանակության: Եղիա Տեմիրճիպաշյանի անհատականությունը կերտելիս հեղինակը բացահայտում է նրա մարդկային խառնվածքի և ստեղծագործության էկլեկտիզմը: Ասատուրը հիանում է գրողի ինքնատիպ տաղանդով, գեղեցիկի տարերային զգացողությամբ և հմայելու կարողությամբ: Գրականագետը հատուկ ուշադրություն է դարձնում Տեմիրճիպաշյանի լեզվի և ոճի առանձնահատկություններին և համարում զրանք գրողի այն մեծ արժանիքները, որոնք հնարավորություն են տալիս ձևի և բովանդակության ուրույն հյուսվածքի: Ասատուրը, սակայն, հաճախ խղում է նկատում գրողի ստեղծագործությունների ձևի ու բովանդակության միջև Տեմիրճիպաշյանը երբեմն իր ուշադրությունը բևեռում է միայն գեղարվեստական կողմին՝ թերի թողնելով արժարժած գաղափարները:

Հրանտ Ասատուրի դիմանկարների շարքը՝ բնորոշների արտաքինի ու մարդկային անհատականության, կյանքի մանրամասների, ստեղծագործական առանձնահատկությունների հաճախ դիպուկ բնորոշումներով, ժամանակի գրական մթնոլորտի տիրապետող միտումների դրսևորմամբ, գրական-հասարակական առնչությունների բացահայտմամբ, պատմական ուրույն արժեք է ներկայացնում:

Արևմտահայ մշակութային կյանքում դարավերջին հաստատորեն զարգացում էին ապրում գրականությունը, հայագիտությունը, արվեստի և պատ-

32 Նույն տեղում, էջ 67:

33 Նույն տեղում, էջ 242:

մուծյան սարքեր ճյուղեր, որոնց առաջընթացին մեծապես նպաստում էր պարբերական մամուլը: Անդրադառնալով ժամանակին հրատարակվող պարբերականներին, Ասատուրը բարձր է գնահատում նրանց կատարած դերը հասարակական կյանքի, հատկապես գրականության, հրապարակագրության և արվեստների զարգացման ասպարեզում: Գրողներն իրենց ստեղծագործությունները առանձին գրքերով հրատարակելու հնարավորություն չունեին և հանդես էին գալիս պարբերականների էջերում: Ուստի, մամուլի օրգաններն էին գրականության տարածման հիմնական միջոցները և նրա զարգացմանը նպաստողները: Ասատուրը որպես օրինակ բերում է «Արևելք» թերթը, որին հետևել է տպագրման առաջին իսկ օրերից և ափանատես եղել նրա առաջընթացին: Քննադատը նշում է թերթում լույս տեսնող գեղարվեստական երկերի մակարդակի բարձրացումը և գոհունակություն հայտնում աշխատակիցների նոր սերնդից, որոնք ավելի բանիմաց են ու գրագետ: և գրականության զարգացումը տանում են դարասկզբի գաղափարական-գեղագիտական պահանջների թելադրմամբ: Քննադատը հարց է բարձրացնում մենագրական ուսումնասիրություններով, հոբելյանական տարեթվերի նշումով արժեքավորել խմբագիրների, գրողների ազգօգուտ գործունեությունը:

Մտահոգված լինելով մշակույթի գործիչների և նրանց վաստակի արժեքավորմամբ, Ասատուրը անդրադառնում է նաև գրական քննադատությանը: «Դյուրազգացություն» հոդվածում գրականագետը մեկնաբանում է իր տեսակետները քննադատության վերաբերյալ: Նա շեշտը դնում է առաջին հերթին ուղղամտության վրա: Ասատուրը չափազանց կարևոր է համարում անկողմնակալ քննադատությունը, որը ելնում է միմիայն գրական շահերից և զերծ է ամեն կարգի անձնական մղումներից. «...ինչ որ պետք է պահանջել լրագրողներից, — գրում է նա, — իրենց ուղղամտությունն է: Նրբ ամեն թաքուն նկատումն անկախ, ներքին իրական համոզում մը կը պարզեն, երբ իրենց բուն մտածումը հանրային կարծիքին առջև կը դնեն, առանց անոր խառնելու անձնական հաշիվներ, կողմնակալ ոգի կամ «շանթաժ»ի դիտում, պետք է հարգել անոնց կարծիքները և տալ անոնց այն կարևորությունը՝ որուն արժանի են»³⁴:

Ազգային մշակույթի զարգացման շահերից ելնող գրական քննադատությունը չափազանց օգտակար է և կարևոր, որքան էլ սուր լինի: Ստեղծագործությունների հեղինակները չպետք է վիրավորվեն այդպիսի անաչառ քննադատությունից և իրենց արժանապատվությունը ոտնահարող շեշտեր փնտրեն դրանց մեջ: Նրանք պետք է աշխատեն դասեր քաղել և «դարմանել թերությունները»: «Ամեն անկեղծ դիտողությունը իր օգուտը ունի, — գրում է Ասատուրը, — նույնիսկ երբ ցավ պատճառելու հանգամանքն ունենա, վիրահատ գործիքին պես որ կը տանջե բայց կը բուժե, ուստի քննադատությունները, որքան ալ սուր ու խիստ, պետք չէ վիրավորեն զմեզ, բավական է որ անկեղծության շեշտը և օգտակար ըլլալու ձգտումը գտնես անոնց մեջ»³⁵:

Գրական-քննադատական գործունեության ողջ ընթացքում Ասատուրը հաճախ անդրադարձել է եվրոպական արվեստներին ու գրականությանը: Տիրապետելով ֆրանսերենին և ծանոթ լինելով եվրոպական երկրների գրական ընթացքին, նա պարբերաբար հրատարակվող իր քրոնիկներում հայ ընթերցողին էր ներկայացնում նշանավոր գրողների ու արվեստագետների: Ասատուրը գտնում էր, որ հայ միտքը անպայման պետք է շփվի համաշխարհային մշակույթի արժեքներին, դասեր քաղի նրանցից. «...անոնք ամբողջ սերունդներու վրա կազդեն, — գրում է նա եվրոպական հեղինակների մասին, — և ոչ միայն հաճույքի անուշ ժամեր կուտան մեզ իրենց գրվածներով, այլև մտածելու ու կյանքը հասկանալու համար կօգնեն մեզ»³⁶:

34 «Մասիս». 1898, № 9:

35 Նույն տեղում:

36 «Արևելք». 1898, № 772:

Անդրադառնալով Գյոթեի «Վերթերին» և Շատոբրիանի ստեղծագործություններին («Վերթերը» օպերայի վերածելու և Շատոբրիանի մահվան 50-ամյակի առթիվ), Ասատուրը վերապրում է ռոմանտիկական գրականության մտքի թռիչքի ու զգացմունքայնության հրապույրը և գտնում, որ տաղանդավոր ստեղծագործությունները երբեք չեն կորցնում իրենց ազդեցության ուժը:

Ռոմանտիկական արվեստը հակադրելով ժամանակակից ուղղություններին, որոնք հատկապես Ֆրանսիայում գրականությունն առաջնորդեցին «մինչև անկապաշտություն», Ասատուրը մնալուն արժեքներ է համարում գեղարվեստական բարձր մակարդակով գրված «մաքուր ու անբիծ զգացումներու» ուղորտ պատկերող գործերը: Նա քննադատում է ժամանակակից գրականության անկումային ուղղությունները և գնահատում է ֆրանսիական ռեալիստական դպրոցն ու նրա ներկայացուցիչներին: Անդրադառնալով Ֆլոբերի դրական գործունեությանը և վերլուծելով «Մադամ Բովարի» վեպը, գրականագետը Ֆլոբերին համարում է Բալզակի գործի շարունակողը և ռեալիզմի հիմնադիրներից մեկը ֆրանսիական գրականության մեջ: Ասատուրը սրտի ցավով է նկատում, որ Ֆլոբերը ծանոթ չէ հայ ընթերցողին և առհասարակ «Ֆրանսայի նոր հեղինակներն մեր գրականությանը օտար կը մնան»: Նա պահանջ է դրնում թարգմանության: Անհրաժեշտ է հայացնել ֆրանսիական ռեալիստական ուղղության ներկայացուցիչներին (Բալզակ, Ֆլոբեր, Ստենդալ և ուրիշներ), հայ ընթերցողը պետք է ծանոթանա գրական այն մտայնությանը և նոր խնդիրներին, որ իրենց հետ բերում էին Պոլ Ազանը, Անատոլ Ֆրանսը, Գոնկուր եղբայրները, Զոլան, Դոդեն, Մոպսանը և ուրիշներ՝ «նորագույն այն դործիչներն, որք ֆրանսական գրականության արդի ձուլը տվին»³⁷:

Դարավերջի արևմտահայ հասարակական և մշակութային միտքը ծաղկի էր համաշխարհային գեղարվեստական և գիտական նվաճումների յուրացման: Պահանջ էր զգացվում լայնացնել թարգմանական գրականության շրջանակները: Հրանտ Ասատուրը գտնում էր, որ որպես հոգևոր գոյության հաստատում, հայ մշակույթը չպետք է ետ մնա համաշխարհային առաջընթացից և դա պետք է արվի, առաջին հերթին, սեփականելով մյուս ժողովուրդների ձեռք բերած նվաճումները: Ժամանակակից հայ գրականության զարգացումը, ըստ նրա, պետք է տարվի նաև դասական ավանդների յուրացման ճանապարհով: Անհրաժեշտ է թարգմանել համաշխարհային գեղարվեստական այն արժեքները, որոնք հագեցած են համամարդկային գաղափարներով: «Հոմերոս և Վիրգիլիոս դեռ մինչև այսօր իրենց գրաբար թարգմանություններով միայն ծանոթ են մեզ», — գրում է Ասատուրը: Նույն բանը կարելի է ասել նաև Դանտեի, Տասոյի, Շեքսպիրի, Միլտոնի, Բայրոնի վերաբերյալ: Կատարվել են Գյոթեից, Շիլլերից, Մոլիերից աշխարհաբար մի քանի թարգմանություններ միայն, որոնք այնքան էլ չեն գոհացնում «մեր արդի խստապահանջ ընթերցողները»: Գրականագետը պահանջում է համաշխարհային գրականության նշանավոր դեմքերի թարգմանությունն իրացնել ժողովրդին հասկանալի աշխարհաբար լեզվով:

Ասատուրն անդրադառնում է նաև թարգմանական արվեստի վարպետության ու կատարելության խնդրին: Այս առիթով նա հիշատակում է Գր. Օտ-

37 Նույն տեղում, 1889, № 1556:

յանի թարգմանած Հալեմիի «Աբբա Քոսթանթին» վեպը, որ «հրաշակերտ մըն է հարազատ ու գեղեցիկ թարգմանություն»։ Ասատուրը թարգմանիչներից պահանջում է բարձր որակ և կատարելագործված արվեստ։ Այն թարգմանությունները, որոնք չեն բավարարում ժամանակակից գրական ճաշակը, խեղաթյուրում են հեղինակի գաղափարներն ու գեղարվեստական ինքնությունը, «աններելի ոճիրներ» են և անարժեք գործեր հասարակության համար։ Գրականագետը մեծ նշանակություն է տալիս գեղարվեստական երկերի թարգմանությունների լեզվին։ Հմուտ թարգմանությունները նպաստում են լեզվի կատարելագործմանը և կարող են ճոխացնել ու զարգացնել գրական աշխարհաբարը։

Հրանտ Ասատուրը ոչ միայն տեսական քննարկումներով, այլև իր կատարած բարձրարժեք թարգմանություններով նպաստում էր ժամանակի թարգմանական գրականության զարգացմանն ու արևմտահայ լեզվի հարստացմանը։

ЛИТЕРАТУРНО-КРИТИЧЕСКИЕ ВЗГЛЯДЫ ГРАНТА АСАТУРА

Н. В. АНАНЯН

(Резюме)

Грант Асатур (1862—1928) был одним из первых теоретиков реализма в западноармянской литературе. Статья посвящена взглядам Асатура на демократизацию литературы, на реальное отображение действительности, типизацию образов, совершенствование художественных форм. Рассматриваются те работы литературоведа, в которых он защищал первые реалистические произведения в западноармянской литературе и ратовал за претворение в жизнь принципов реализма.